

Մոլոկաններ

Մոլոկաններ- ռուսական կրոնական շարժում է (կրոնական փոքրամասնություն), որ առաջացել է **18-րդ դարի** երկրորդ կեսին, Տամբովի գավառում: Մոլոկանների կրոնական ուղղությունը առաջացել է դոկտորների աղանդից և պահպանել վերջինիս վարդապետության և ծեսերի մեծ մասը: Կրոնական ուղղության հիմնադիրն է Սիմոն Ուկլեինը: «Մոլոկան» անունը տրվել է դեռ 1765 թվականին: Անվանումը կապում են ավետարանական «հոգևոր կաթի» (словесное молоко)՝ իրենց քարոզած Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքի, ինչպես նաև պասի օրերին կաթ խմելու սովորույթի հետ: Մոլոկանները իրենց «Հոգևոր քրիստոնյաներ» են անվանում և իրենց ընդունած մոլոկան անունը բացատրում են նրանով, որ իրենց դավանած վարդապետությունը այն օգտագործվող կաթն է, որի մասին խոսվում է Սուրբ Գրքի մեջ: Մոլոկանների կարծիքով հավատի ուսուցման միակ ճիշտ աղբյուրը կարող է լինել Սուրբ գրքի **Հին և Նոր կտակարանները**: Նրանք չեն ընդունում, որ կան ուրիշ քահանաներ, քանզի կա միայն մեկ քահանա՝ Հիսուս Քրիստոսը, իսկ բոլոր մարդիկ քույր և եղբայրներ են և հավասար միմյանց: Նրանք չեն ընդունում եկեղեցական աստիճանակարգը, ձեռագործ եկեղեցիները, ուղղափառ ծեսերը, չեն հավատում «օրագրերին», սրբապատկերներին: Աղոթելիս չեն խաչակնքվում, և չեն ընդունում մկրտությունը: Մոլոկաններ՝ ռուսների էթնիկական խումբ է, ովքեր մերժում են ուղղափառ եկեղեցին ու ծիսակատարությունները, ունեն իրենց ավանդույթներն ու սովորույթները և այլն: **Ցարիզմի** օրոք հալածվում էին, որի հետևանքով մոլոկանները մեծ խմբերով գաղթեցին **Կանադա**, ինչպես նաև **Հարավային Կովկաս**: **Հայաստանում** մոլոկանները հիմնականում ապրում են **Լոռու մարզում**, մասնավորապես՝ **Տաշիր** քաղաքում, կամ ինչպես տեղաբնիկներն են հիշում, Կալինինո, իսկ ավելի վաղ՝ Վորոնցովկա, **Ֆիալետովո** գյուղում ինչպես նաև **Գեղարքունիքի մարզի Ճամբարակ** քաղաքում: Անկախությունից հետո սկսվեց մոլոկանների արտագաղթ դեպի **Ռուսաստան**, որի հետևանքով նրանց թիվը **Հայաստանում** զգալիորեն պակասեց:

Յուրաքանչյուր մոլոկանի տուն ունի բավականին ընդարձակ գավիթ, ուր գտնվում է բաղնիքը, փխոռը, խոտանոցը և շտեմարանը: Բնակարանը բաղկացած է երկու սենյակներից, որոնց դռները բացվում են նախասենյակների մեջ: Սենյակները հիմնականում քառանկյունի են լինում, եթե ոչ երեք, գոնե երկու կողմից երկական կամ մի մի պատուհաններով: Հատակն ու առաստաղը տախտակից է, բայց ոչ երբեք ներկված: Սովորաբար սենյակներից մեկում լինում է երկար ռուսական փուռ, մյուս սենյակները տաքացվում են թիթեղյա վառարաններով: Սենյակի պատերին կից ձգվում են նեղ և երկար նստարաններ, իսկ անկյուններում փայտե պահարաններ, մի քանի նեղ և երկար նստարաններ մոտեցնելով կազմվում է մոլոկանի մահճակալը, սենյակի անկյունում սովորաբար դրված է լինում հասարակ փայտե սեղանը, որի վրա հասարակ փոքրիկ հասարակ լամպ է լինում, կողքերին մի քանի աթոռ(որը կոչվում է տաբուրետկա), տները քարաշեն են, կտուրը՝ եռանկյունաձև, կղմինդրով ծածկված, տան երկու կողմերը կան փոքր պատշգամբներ: Նրանց ուտելիքի գլխավոր մասն է կազմում թեյը, կաթը, կարտոֆիլը: Մոլոկանները շատ են սիրում թեյ: Եվ այն պատրաստման հատուկ եղանակ ունեն ինքնատեղի մեջ:

Տարբերվում է նաև մոլոկանների հանդերձանքը՝ տղամարդիկ կարմիր կամ կապույտ չթից կարված շապիկ են հագնում, որի փեշերը թողնում են անդրավարտիքի վրա, ոչ թե դնում անդրավարտիքի տակ, ինչպես տարածված է տղամարդկանցից շատերի մոտ: Թևերը երկար են կոճկվում են դաստակի մոտ: Անդրավարտիքը կարում են չթից կամ իրենց պատրաստած կտավից, ծայրերը դնում են կոշիկների մեջ, որը հասնում է մինչև ծնկները: Ծապիկի վրայից հագնում են ժիլետկա, որը անթև է և կրծքի վրա ամբողջովին կոճկվում է: Աշխատելիս սովորաբար ճիլետով կամ միայն մի շապիկով են մնում, այս դեպքում գոտի են կապում: Ժիլետի վրայից հագնում են պադդեովկա, որը կարվում է շվեդական կիսամահուղից, իջնում է մինչև ծնկները՝ մեջքի վրա փոքր-ինչ սեղմելով: Երկու կողքերին կա մի գրպան, կոճկվում է

մի կողմի վրա և վզի մոտ օձիքը հետ է ծալված: Գլխին դնում են կարտուզ կոչվող գլխարկ, որն ունի լայն կզիրոկ, իսկ ձմեռը ցածր, կտորից կարած փափախ, որի վերին մասը թավշյա է լինում, ձմեռը ոմանք ոչխարի մորթուց կարած մուշտակ են հագնում: Հագնում են գուլպա և երկար վզով կոշիկներ:

Կանանց շապիկը կարում են բացարձակապես կարմիր չթից, իջնում է մինչև ոտքերը, սրա վրայից հագնում են կիսաշրջագգեստ բամբակյա կտորից: Կիսաշրջագգեստի վրայից հագնում են սարաֆան, որ մեջքի վրա սեղմելով բարձրանում է մինչև կուրծքը: Երկու ժապավեն ուսերի վրայով անցնելով պահում են այս հանդերձը: Սարաֆանի վրա կապում են կարմիր չթից գոգնոց և հագնում կոֆտա, որ հասնում է մինչև մեջքը, երկար թևեր ունի և կրծքի վրա կոճկվում է: Ձմեռը այս բոլորի վրայից հագնում են արխալուղ, սև կամ կապտագույն կտորից և բամբակից իջնում է մինչև ծնկները: Աջ կողմում կա մի գրպան: Աղջիկները գլխին միայն կարմիր յայլուխ են կապում, իսկ կանայք նախ մի յայլուխ եռանկյունաձև ծալում են, ճակատի վրայով անցկացնում կապում են ծոծրակին և ապա մի ուրիշն էլ ձգում վրայից և կապում վզի տակ: Հագնում են կիսկոշիկներ, ընդհանրապես կանանց շորերը կարճ են և գուլպաները երևում են:

Մուլականները ամուսնանում են տղաները՝ 19 տարեկանում, իսկ աղջիկները՝ 17 տարեկան, ամուսնացող զույգի տարիքային տարբերությունը հազվադեպ է մեծ լինում: Աղջիկ փախցնելու սովորությունն նրանց մեջ չկա: Աղջկան ընտրում են տղայի ծնողները, սակայն հաշվի են առնում տղայի կարծիքը: Երբ որոշում են նշանել, տղայի ծնողները գնում են աղջկա ծնողների տուն, բայց այն ժամանակ, երբ աղջիկը տանը չի լինում և չի իմանում: Մինչև տուն մտնելը տղայի ծնողները աղջկա ծնողների տան դռան առաջ խաչում են ձեռքերը և շշնջում «Հայր Մերը»: Աղջկա ծնողները նախօրոք գիտեն նրանց այցի նպատակը, սակայն չեն ասում, մինչև բուն թեմային անցնելը սեղան են բացում, իսկ երբ վերջանում է թեյը նրանք նոր սկսում են խոսել գալու նպատակի մասին: Աղջկա համաձայնությունը ստանալաց հետո հայրերը միմյանց ձեռք են սեղմում, աղջկա մայրը տղայի մորը տալիս է մի ասեղնագործ թաշկինակ, իսկ տղայի հայրը աղջկա հորը տալիս հինգ ռուբլի: Մի քանի օր հետո աղջկա տանը խնամիները հավաքվում են և որոշվում է աղջկա գլխագինը, որը տատանվում է 50-120 ռուբլու մեջ: Իսկ որպես նշան տղայի վզին կապում են կարմիր թաշկինակ: Հետո երկու խնամիները գնում են քաղաք հարսանիքի պատրաստություն տեսնելու: Երբ բերում են հարսանեկան անհրաժեշտ պարագաները աղջիկը իր ընկերուհիների հետ միասին կարում են հարսանեկան շորը և «թագավորի» հագուստը: Հարսանիքի օրը փեսայի եղբայրը գալիս է տանելու «թագավորի» շորը: Հետո հավաքվում են բոլորով խնջույք կազմակերպում, որի ժամանակ միջնորդը հավաքում է մասնակիցներից հարսի և փեսայի նվերները: Սովորաբար հարսանեկան ծախսերը բոլորը անում է տղայի կողմը: Մուլականները ապրում են մեծ գերդաստաններով:

Մուլականները ամուսնությունից հետո պետք է մորուք պահեն: Գերդաստանի իշխանությունը պատկանում է մեծ մորը, իսկ նրա մահից հետո՝ ավագ հարսին: Նրանք մոտ ամուսնալուծությունները չեն թույլատրվում: Միայն երբ կինը չի հարմարվում ամուսնական կյանքին, ծերերի խորհուրդը թույլ է տալիս նրա ամուսնուն ամուսնանալ այլ կնոջ հետ, սակայն նա պետք է իր առաջին կնոջը ապրուստի միջոցներ տա: Նրաց ծեսերի համաձայն՝ ծննդկան մայրը, եթե աղջիկ է ունեցել, 80 օր համարվում է պիղծ, իսկ տղա ունենալու դեպքում՝ 40 օր, նա չի կարող հաց թխել, կերակուր եփել, նրա հետ ոչ ոք բացի ամուսնուց ճաշելու իրավունք չունի: Երեխան պարտադիր պետք է տրվի այդ գերդաստանի անդամներից մեկի անունով: